Mountains ADAPT

Փոքր դրամաշնորհների ֆինանսավորման ծրագիր (SGFS)

Ֆինանսավորման ծրագրի ընդհանուր նկարագիրը

Ծրագրի իրականացման Տարածաշրջան	Հարավային Կովկաս
Իրավասու երկրներ	Հարավային Կովկասի երկրներ, ներառյալ Հայաստանը[1]
Իրականացնող կազմակերպություններ	Նախընտրելի են տեղական և համայնքային կազմակերպությունները, երիտասարդական և կանանց կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններ (ՔՀԿ-ներ):
Թեմատիկ ոլորտներ	• Էկոհամակարգերի վերականգնում • Ջրային ռեսուրսների պահպանում և արդյունավետ կառավարում • Կլիմայակայուն խելացի գյուղատնտեսություն և պարենային անվտանգության ապահովում • Աղետների ռիսկի նվազեցում, պատրաստվածություն և դիմակայունության բարձրացում, • Եկամտի աղբյուրների բարելավում և կենսապահովման միջոցների դիվերսիֆիկացում/ բազմազանեցում/ • Առողջության և կյանքի որակի բարելավում
Յուրաքանչյուր նախագծի համար դրամաշնորհի չափը	Մինչև **30,000** ԱՄՆ դոլար
Շահառու խումբ	Տեղական լեռնային համայնքներ
Իրականացման ժամկետ	**12** ամիս

[1] Mountains ADAPT-ի ֆինանսավորման ընդլայնված ծրագրերը ներառում են նաևԱրևելյան Աֆրիկայի երկրները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք կայք. https://www.unep.org/topics/climate-action/adaptation/ecosystem-based-adaptation/mountains-adapt

Դիմելու իրավունք

SGFS-ը ֆինանսավորում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, մասնավորապես՝ տեղական, համայնքային, երիտասարդական և կանանց կազմակերպություններին, որոնք իրականացնում են համայնքային մակարդակի նախաձեռնություններ՝ Հարավային Կովկասի լեռնային համայնքներում կլիմայի փոփոխության ազդեցություններին հարմարվողականությունը խթանելու նպատակով:

Դիմորդների հիմնական համապատասխանության չափանիշները
Դիմորդները պետք է համապատասխանեն հետևյալ հիմնական չափանիշներին.

- **Անդրադառնալ լեռնային շրջաններում կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրներին և/կամ խոցելիություններին**՝ նպատակ ունենալով պահպանել, վերականգնել կամ բարելավել կենսապահովման միջոցները, էկոհամակարգերի կայունությունը և սննդային անվտանգությունը:
- **Լինել օրինականորեն գրանցված կազմակերպություն**, որը տեղակայված է շահառու երկրների՝ **Հարավային Կովկասի** լեռնային շրջաններում և գործունեություն է իրականացնում՝ լեռնային էկոհամակարգերին և դրանցում բնակվող համայնքներին օգուտներ ու ծառայություններ տրամադրելու ուղղությամբ:
- **Ունենալ համայնքներին ուղղված նախագծերի մշակման և իրականացման համապատասխան փորձ**: Հարմարվողականության և/կամ շրջակա միջավայրի պահպանությանն ու կայուն կառավարմանը միտված գործունեության ապացուցված փորձը կդիտարկվի որպես առավելություն:

Առավելություն կտրվի այն դիմորդներին, որոնք կնպաստեն կանանց և աղջիկների հզորացմանը, կխթանեն նրանց իրավունքներն ու կարողությունների զարգացումը և կապահովեն գենդերային հավասարակշռության բարելավումը:

Ծրագրի առաջնահերթությունները

Ծրագիրը ֆինանսավորում է **կլիմայի փոփոխության ազդեցություններին խոցելի համայնքների դիմակայունության բարձրացմանն ուղղված նորարարական նախաձեռնություններ**:

Առաջարկվող նախագծերը պետք է՝

- հզորացնեն և ակտիվորեն ներգրավեն տեղական համայնքներին՝ որպես փոփոխությունների և լուծումների գործընթացի առանցքային դերակատարների,
- արձագանքեն բացահայտված **կլիմայական ռիսկերին և ազդեցություններին**,
- համապատասխանեն **ազգային և տեղական մակարդակներում գործող համապատասխան քաղաքականություններին, ռազմավարություններին, ծրագրերին և պլաններին**,
- որպես առանցքային միջոլորտային մոտեցում ներառեն **բնության վրա հիմնված լուծումները (Nature-based Solutions – NbS)**:

Բոլոր աջակցվող նախաձեռնություններին խրախուսվում է ներառել **կարողությունների զարգացում**, ամրապնդել **ավանդական և տեղական գիտելիքների համակարգերը**, ինչպես նաև անդրադառնալ **կանանց, երիտասարդների և այլ խոցելի խմբերի** առջև ծառացած առանձնահատուկ մարտահրավերներին:

Գործունեության թեմատիկ ուղղությունները

Առաջարկվող գործունեությունը պետք է հիմնված լինի **համապարփակ և կայուն կենսապահովման միջոցների ապահովման մոտեցման վրա** և իրականացվի մեկ կամ մի քանի թեմատիկ ուղղություններով, որոնք կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

- **Էկոհամակարգերի վերականգնում.** Վերականգնել դեգրադացված լանդշաֆտները՝ կիրառելով **բնության վրա հիմնված լուծումներ (NbS)**՝[2] *ՄԱԿ-ի Էկոհամակարգերի վերականգնման տասնամյակի* և դրա առաջնորդող սկզբունքներին համապատասխան՝ միաժամանակ ապահովելով **էկոլոգիական ամբողջականությունը և կենսապահովման միջոցների կայունությունը**:
- **Ջրային ռեսուրսների պահպանում և արդյունավետ կառավարում.** Բարելավել, վերականգնել և պահպանել համայնքային ջրային ենթակառուցվածքները, այդ թվում՝ ջրամատակարարման համակարգերը, **կիրառելով էկոհամակարգային մոտեցումներ և ապահովելով համայնքի բոլոր անդամների հավասար և արդար հասանելիությունը ջրային ռեսուրսներին**:
- **Կլիմայակայուն, խելացի գյուղատնտեսություն և սննդային անվտանգություն.** Վերափոխել ագրոպարենային համակարգերը՝ խթանելով **էկոլոգիապես կայուն և կլիմայակայուն գյուղատնտեսական գործելակերպերը**, այդ թվում՝ երաշտադիմացկուն մշակաբույսերի և սերմերի տեսակների կիրառումը, **ագրոէկոլոգիայի և պերմակուլտուրայի /մշտական մշակության/զարգացումը**, կաթիլային ոռոգման և անձրևաջրերի հավաքման համակարգերի ներդրումը, ինչպես նաև կոմպոստացման, ցանքաձածկման և վերականգնողական գյուղատնտեսության մեթոդների կիրառումը՝ **հողի առողջության և բերրիության բարելավման նպատակով**:
- **Աղետների նկատմամբ պատրաստվածություն և դիմակայունություն.** Խթանել **էկոհամակարգային մոտեցումների վրա հիմնված աղետների ռիսկի նվազեցման և պատրաստվածության միջոցառումները**՝ համայնքային մակարդակում ռիսկերի գնահատման, տեղայնացված վաղ նախազգուշացման համակարգերի մշակման և ներդրման, հողօգտագործման համապատասխան պլանավորման, ինչպես նաև **տեղական և բազմաշահառու գործընկերությունների ձևավորման** միջոցով:
- **Եկամտի աղբյուրների բարելավում և դիվերսիֆիկացում/բազմազանեցում/.**
- Խթանել **այլընտրանքային և կայուն կենսապահովման հնարավորությունները**, այդ թվում՝ կայուն արժեքային շղթաների զարգացումը, **էկոտուրիզմը** և **բնության վրա հիմնված լուծումների (NbS) հետ կապված ձեռնարկատիրական գործունեությունը**:
- **Առողջության և կյանքի որակի բարելավում.** Նվազեցնել ջերմային սթրեսի և շրջակա միջավայրի աղտոտվածության ազդեցությունը և բարելավել բնակչության կենսապայմաններն ու կյանքի որակը, մասնավորապես՝ **բոլոր խմբերի համար հասանելի և ներառական հանրային ու հանգստի տարածքների** ստեղծման կամ բարելավման միջոցով:

---

[2] Էկոհամակարգերի վերականգնման ՄԱԿ-ի տասնամյակը (2021–2030 թթ.), որն իրականացվում է ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) առաջնորդությամբ, կոչ է անում գլոբալ մակարդակով գործողություններ ձեռնարկել՝ էկոհամակարգերի դեգրադացիան կանխելու, կասեցնելու և վերականգնելու նպատակով: Դրա ուղղորդող սկզբունքներն ընդգծում են էկոլոգիական ամբողջականությունը, ներառականությունը, հավասարությունը, կայունությունը, ինչպես նաև մարդկանց և բնության համար երկարաժամկետ օգուտների ապահովումը:
Լրացուցիչ տեղեկությունների համար՝ www.decadeonrestoration.org

Դիմումի գործընթաց

Դիմորդները պետք է լրացնեն նախագծին վերաբերող պահանջվող տեղեկատվությունը և առցանց դիմումի հարթակի միջոցով ներկայացնեն անհրաժեշտ փաստաթղթերը:

Պահանջվող փաստաթղթեր

Դիմորդներից կպահանջվի դիմումի հետ միասին ներկայացնել մի շարք օժանդակ փաստաթղթեր, այդ թվում՝

- կազմակերպության գրանցման վկայականը,
- կազմակերպության բանկային տվյալները (**միայն ընտրված դիմորդներից**),
- կազմակերպության իրավասու ներկայացուցչի անձնագրի պատճենը (**միայն ընտրված դիմորդներից**),
- այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ՝ ըստ անհրաժեշտության:

Բոլոր փաստաթղթերը, ներառյալ նախագծին վերաբերող տեղեկատվությունը, կարող են ներկայացվել **ազգային լեզվով կամ անգլերենով**:

Համապատասխանության նախնական ստուգում

Իրականացնող գործընկ Առցանց դիմումի ներկայացումից հետո իրականացնող գործընկերները**,** UNEP-ի ծրագրային թիմի հետ խորհրդակցությամբ, կուսումնասիրեն ներկայացված հայտերը: Անհրաժեշտության դեպքում նրանք կկապվեն դիմորդների հետ՝ լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ստանալու նպատակով:

երները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն ներկայացված տեղեկատվությունը և, անհրաժեշտության դեպքում, ստուգեն դրա հավաստիությունն ու համապատասխանությունը՝ համոզվելու համար, որ բավարարվում են հետևյալ նվազագույն համապատասխանության չափանիշները**.**

- ✓ Դիմումի ձևում պահանջվող որևէ էական տեղեկատվություն բացակայում կամ լրացված չէ:
- ✓ Դիմորդը պատշաճ կերպով գրանցված համայնքային մակարդակում գործող կազմակերպություն է, ունի վստահելի տեղական ներկայություն և բավարար ֆինանսական կայունություն:
- ✓ Ներկայացված խնդիրը հստակորեն առնչվում է լեռնային շրջաններում կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությանը**:**
- ✓ Առաջարկվող լուծումը հիմնականում հիմնված է բնության վրա հիմնված լուծումների (NbS) վրա և իրականացվում է համապարփակ մոտեցման շրջանակում:
- ✓ Առաջարկվող լուծումը համապատասխանում է UNEP-ի բնապահպանական և սոցիալական պաշտպանության պահանջներին և համահունչ է UNEP-ի Շրջակա միջավայրի և սոցիալական կայունության շրջանակի (Environmental and Social Sustainability Framework – ESSF) առաջնորդող սկզբունքներին:[3]

Համապատասխանության գնահատման չափանիշներ

Արդար, թափանցիկ և հետևողական ընտրության գործընթաց ապահովելու նպատակով կկիրառվի համապատասխանության հստակ չափանիշների համակարգ**,** որը ներառում է հետևյալը.

- Դիմորդը պատշաճ կերպով գրանցված համայնքային կամ քաղաքացիական հասարակության կազմակերպություն է և գործում է շահառու լեռնային տարածաշրջանում:
- Առաջարկը հստակորեն սահմանված կլիմայական մարտահրավերի կամ խոցելիությանն արձագանքող լուծում է:

[3] https://wedocs.unep.org/handle/20.500.11822/32022

- Առաջարկվող լուծումը հիմնականում հիմնված է բնության վրա հիմնված լուծումների (NbS) և/կամ էկոհամակարգային հարմարվողականության միջոցառումների վրա:
- Առաջարկը նպաստում է տեղական համայնքների դիմակայունության, կենսապահովման հնարավորությունների և կյանքի որակի բարելավմանը:
- Առաջարկվող գործունեությունը համապատասխանում է ազգային և տեղական համապատասխան քաղաքականություններին, ռազմավարություններին և ծրագրերին:
- Առաջարկը ներառում է ներառականության, գենդերային հավասարության և խոցելի խմբերի մասնակցության ապահովման համապատասխան մոտեցումներ:
- Առաջարկվող գործունեությունը համապատասխանում է UNEP-ի բնապահպանական և սոցիալական պաշտպանության պահանջներին:
- Արդյո՞ք դիմորդն ունի փոքր դրամաշնորհը պատշաճ և արդյունավետ կառավարելու համար անհրաժեշտ ֆինանսական և գործառնական կարողություններ, ներառյալ ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման հիմնական կարողությունները:
- Արդյո՞ք դիմորդն ապահովում է հաշվետվողականություն շահառու համայնքի նկատմամբ, մասնավորապես՝ համայնքի անդամների ներգրավման, նրանց հետ արդյունավետ հաղորդակցության, ինչպես նաև դրամաշնորհային միջոցների օգտագործման և իրականացվող գործունեության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկ և հասանելի ներկայացման միջոցով:
- Արդյո՞ք դիմորդն ունի տեղական մակարդակում նախագծերի կամ ծրագրերի իրականացման համապատասխան փորձ:
- Արդյո՞ք դիմորդը դրսևորել է գենդերային հավասարության, սոցիալական ներառման և հավասար հնարավորությունների ապահովման հստակ հանձնառություն:
- Արդյո՞ք դիմորդը ինստիտուցիոնալ առումով անկախ է տեղական ինքնակառավարման մարմիններից, այսինքն՝ չի հանդիսանում կառավարության ուղղակի ստորաբաժանում, պետական մարմին կամ քաղաքական կառույց:
- Արդյո՞ք առաջարկվող բյուջեն չի նախատեսում պետական պաշտոնատար անձանց, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ուղղակի աշխատավարձերի կամ հավելավճարների վճարում՝ UNEP-ի ֆինանսական կանոններին և ընթացակարգերին համապատասխան:[4]
- Արդյո՞ք առաջարկը հիմնված է ազգային և/կամ ենթազգային մակարդակներում գործող կլիմայի փոփոխության և հարմարվողականության վերաբերյալ համապատասխան քաղաքականությունների, ռազմավարությունների և ծրագրերի բավարար իմացության վրա, և հստակ ցույց է տալիս, թե ինչպես կարող է առաջարկվող գործունեությունը նպաստել դրանց տեղական իրականացմանը:

Այս չափանիշները նախատեսված են ոչ միայն **տեխնիկական համապատասխանությունը և կազմակերպական կարողությունները գնահատելու**, այլև **հաշվետվողականության, թափանցիկության, հակակոռուպցիոն սկզբունքների, սեռական շահագործումից, չարաշահումից և ոտնձգություններից պաշտպանության, մարդու իրավունքների պաշտպանության և ֆինանսական միջոցների պատասխանատու ու նպատակային օգտագործման** միջազգային սկզբունքների պահպանումն ապահովելու համար:

Անկողմնակալություն, հաշվետվողականություն և բողոքների ու արձագանքման մեխանիզմ

Տեղական մակարդակում **SGFS-ի իրականացման գործընթացի ամբողջականությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը** ապահովելու նպատակով նախատեսվում է պարզ, անվտանգ և հասանելի **բողոքների և արձագանքման մեխանիզմ**:

---

[4] **Նշում.** Տեղական պաշտոնատար անձանց մասնակցությունը ծրագրի իրականացմանն ուղղված գործունեությանը, օրինակ՝ համակարգման, տեխնիկական վերահսկողության կամ խորհրդատվության շրջանակում, կարող է ապահովվել **բնաիրային (դրամական չլինող) ներդրումների** կամ պետական համաֆինանսավորման միջոցով: Այնուամենայնիվ, **SGFS-ի դրամաշնորհային միջոցներից նրանց ուղղակի վճարումներ չեն կարող իրականացվել**:

Մեխանիզմը համայնքի անդամներին, շահագրգիռ կողմերին և դրամաշնորհառու գործընկերներին հնարավորություն կտա **անվտանգ և, անհրաժեշտության դեպքում, գաղտնի կերպով ներկայացնել բողոքներ, մտահոգություններ կամ հաղորդումներ**, այդ թվում՝ միջոցների հնարավոր չարաշահման, շահերի բախման, կողմնակալության, խտրականության կամ ծրագրի իրականացման ցանկացած փուլում անհիմն բացառման վերաբերյալ:

Մեխանիզմի հիմնական բաղադրիչներն են՝

- **Անանուն բողոքների ներկայացման հասանելի ձևաչափ**՝ թվային ձևաթղթի և/կամ ծրագրային այցերի ընթացքում հասանելի ֆիզիկական բողոքների արկղի միջոցով:
- **Հատուկ էլեկտրոնային հասցե**, որը կառավարվում է UNEP-ի կողմից և համատեղ մշտադիտարկվելու է **Կայուն Կովկասի /Sustainable Caucasus/** հետ:
- Ծրագրի մեկնարկային միջոցառումների ընթացքում համայնքի անդամներին կտրամադրվի հստակ տեղեկատվություն իրենց իրավունքների, բողոքների ներկայացման կարգի և առկա պաշտպանության ու արձագանքման մեխանիզմների վերաբերյալ:
- **Բողոքների հետագա ուսումնասիրման, անհրաժեշտության դեպքում՝ հետաքննության, արձագանքման և փաստաթղթավորման հստակ ընթացակարգ**, որը պետք է ապահովի գործընթացի գաղտնիությունը, անաչառությունը և արդարությունը, ինչպես նաև կանխարգելի բողոք ներկայացնող անձանց նկատմամբ որևէ բացասական հետևանք կամ վրեժխնդիր վերաբերմունք:
- **Բողոքների և բարձրացված մտահոգությունների պատշաճ արձանագրում և հետևողական վերահսկում**՝ դրանց ժամանակին և համապատասխան լուծումն ապահովելու նպատակով:

Առաջարկների գնահատում և ընտրություն

Համապատասխանություն, թափանցիկություն և համադրելիություն ապահովելու նպատակով բոլոր համապատասխան հայտերը կգնահատվեն **ստանդարտացված հայտի գնահատման ամփոփաթերթի (Հավելված 1)** միջոցով: Այս ձևաչափը յուրաքանչյուր առաջարկի վերաբերյալ ապահովում է **հակիրճ, սակայն համապարփակ տեղեկատվություն**, ներառյալ՝ թեմատիկ համապատասխանությունը, համապատասխանության նախնական ստուգման արդյունքները, գնահատման արդյունքները և գնահատողների դիտարկումները:

Ստանդարտացված գնահատման ամփոփաթերթը ներառում է հինգ հիմնական բաժին՝

(1) հայտի վերաբերյալ հիմնական տեղեկատվություն,
(2) նախագծի թեմատիկ ուղղվածությունը և ամփոփ նկարագիրը,
(3) համապատասխանության ստուգման արդյունքները,
(4) որակական գնահատման չափանիշների հիման վրա կատարված գնահատման ամփոփագիրը,
(5) հիմնական դիտարկումները և առաջարկությունները:

Այս **ստանդարտացված ձևաչափը** նպաստում է գնահատման գործընթացի թափանցիկությանն ու հետևողականությանը, նվազեցնում է գնահատողների վարչական և աշխատանքային ծանրաբեռնվածությունը և աջակցում է **ապացույցների վրա հիմնված, արդար, անկողմնակալ և մասնակցային ֆինանսավորման որոշումների կայացմանը**:

Գնահատման գործընթացի թափանցիկությունն ապահովելու և դիմորդների կողմից **լավ մշակված և ամբողջական առաջարկների ներկայացումը խթանելու նպատակով**, գնահատման չափանիշների աղյուսակը հրապարակայնորեն կներկայացվի **առաջարկների ընդունման հայտարարության (Call for Proposals)** հետ միասին:

Որակական գնահատում

Համապատասխանության նախնական ստուգումն անցած հայտերը կներկայացվեն **տարածաշրջանային ընտրության հանձնաժողովին**՝ որակական գնահատման և ֆինանսավորման համար ընտրության նպատակով:

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պարտավոր է **անհատապես ուսումնասիրել և գնահատել** յուրաքանչյուր հայտ՝ հիմք ընդունելով հաստատված գնահատման չափանիշները: Յուրաքանչյուր հայտ գնահատվում է **Հավելված 2-ում ներկայացված գնահատման չափանիշներին** համապատասխան:

Գնահատման ուղեցույցի համաձայն՝ յուրաքանչյուր հայտին նշանակվում է **0-ից 100 միավոր**: Գնահատումն իրականացվում է **երկաստիճան գործընթացով**.

i. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրականացնում է **հայտերի անկախ և անհատական գնահատում**՝ հաշվի առնելով իր մասնագիտական և համատեքստային գիտելիքները, ինչպես նաև համապատասխան ազգային և տեղական քաղաքականությունների ու առաջնահերթությունների վերաբերյալ իր փորձառությունը:

ii. Անհատական գնահատականները համադրվում և ամփոփվում են **միասնական գնահատման աղյուսակում**, որի հիման վրա յուրաքանչյուր երկրի համար առանձնացվում են **ամենաբարձր գնահատականներ ստացած հայտերը**:

Նախագծերի վերջնական ընտրություն

Որակական գնահատման ավարտից հետո **ընտրության հանձնաժողովը համատեղ նիստում** քննարկում է միասնական գնահատման աղյուսակը և, հաշվի առնելով գնահատման արդյունքները, համապատասխանության պահանջները և հասանելի ֆինանսական ռեսուրսները, **կայացնում է վերջնական որոշում ֆինանսավորման ենթակա նախագծերի վերաբերյալ**:

Ընտրության արդյունքները կհաղորդվեն **թափանցիկ և պաշտոնական եղանակով**: Յուրաքանչյուր դիմորդի կուղարկվի **պաշտոնական ծանուցում ընտրության արդյունքի վերաբերյալ**՝[5] էլեկտրոնային փոստով:

---

[5] Ընտրության մասին ծանուցումը չի հանդիսանում UNEP-ի կողմից իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագիր կամ իրավական պարտավորություն: Ֆինանսավորման վերջնական հաստատումը և միջոցների տրամադրումը պայմանավորված են բոլոր պատշաճ ուսումնասիրությունների, համապատասխանության ստուգումների և պահանջների հաջող ավարտով, ինչպես նաև դրամաշնորհի վերաբերյալ պաշտոնական համաձայնագրի ստորագրմամբ: Դիմորդներին խորհուրդ է տրվում ֆինանսական կամ գործառնական պարտավորություններ չստանձնել՝ հիմնվելով բացառապես ընտրության արդյունքի մասին ծանուցման վրա:

Ծանուցումը կներառի՝

- հստակ տեղեկություն այն մասին, թե **հայտը ընտրվել է ֆինանսավորման համար, թե չի ընտրվել**,
- հայտի **հիմնական ուժեղ կողմերի և բարելավման ենթակա ոլորտների համառոտ ամփոփում**՝ գնահատման արդյունքների հիման վրա,
- ընտրված դիմորդների համար **հաջորդ քայլերի վերաբերյալ տեղեկատվություն**, ներառյալ ամբողջական նախագծային առաջարկի մշակումը, իրականացման պլանավորումը և համապատասխանության լրացուցիչ պահանջների կատարումը,
- չընտրված դիմորդների համար, հնարավորության դեպքում, **անհատականացված արձագանք և համապատասխան ուսուցողական ու կարողությունների զարգացման ռեսուրսներ**։

Ընտրված նախագծերի հրապարակում

Ընտրված նախագծերի **համախմբված ցանկը** կհրապարակվի ծրագրի պաշտոնական կայքում՝ ներառելով նախագծերի անվանումները, իրականացնող կազմակերպությունները, երկրները, հիմնական թեմատիկ ուղղությունները և տրամադրվող դրամաշնորհի չափը։

Հրապարակմանը կից կներկայացվի **մամուլի հաղորդագրություն**, որը, անհրաժեշտության դեպքում, կտարածվի նաև սոցիալական մեդիայի և/կամ էլեկտրոնային տեղեկագրի միջոցով։

Մամուլի հաղորդագրությունը, մասնավորապես, կներկայացնի՝

- ստացված և գնահատված հայտերի ընդհանուր թիվը,
- **ընտրության գործընթացի, դրա փուլերի և կիրառված գնահատման չափանիշների համառոտ նկարագիրը**,
- հայտերի ընդունման ընթացքում արձանագրված **աշխարհագրական և թեմատիկ հիմնական միտումները**։

Հաճախակի տրվող հարցեր

⇒ Համապատասխանություն

Ովքե՞ր կարող են դիմել դրամաշնորհի համար։
Դրամաշնորհին կարող են դիմել քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, մասնավորապես՝ տեղական, համայնքային, երիտասարդական կամ կանանց կազմակերպությունները, որոնք իրականացնում են համայնքահենք գործողություններ՝ Հարավային Կովկասի լեռնային համայնքներում կլիմայի փոփոխության ազդեցություններին հարմարվելու նպատակով։

Արդյո՞ք անհատները կարող են դիմել, թե՞ միայն գրանցված կազմակերպությունները։
Դիմել կարող են **միայն պաշտոնապես գրանցված կազմակերպությունները**։ Անհատական դիմումները չեն ընդունվում։

Կազմակերպությունը պարտադի՞ր է պաշտոնապես գրանցված լինի դրամաշնորհին դիմելու համար։
Այո։ Միայն **պաշտոնապես գրանցված կազմակերպությունները** կարող են դիմել։ Դիմորդները դիմումի ձևի հետ միասին պետք է ներկայացնեն իրենց **պաշտոնական գրանցման վկայականը**։
Ընտրվելու դեպքում կազմակերպությունը պետք է ունենա նաև **կազմակերպության անունով բացված պաշտոնական բանկային հաշիվ**. անհատական բանկային հաշիվների օգտագործումը թույլատրելի չէ։

Կա՞ն աշխարհագրական կամ թեմատիկ սահմանափակումներ։
Այո։ Դիմորդները պետք է ունենան **շահառու լեռնային համայնքների հետ անմիջական աշխատանքի փորձ** և կարողանան ներկայացնել առաջարկվող նախագիծն արդյունավետ իրականացնելու իրենց կարողության ապացույցներ։
Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության և/կամ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված գործունեության **ապացուցված փորձը կդիտարկվի որպես առավելություն**։

Կազմակերպությունը պարտադի՞ր է միջազգային ֆինանսավորող կազմակերպությունների հետ աշխատելու նախորդ փորձ ունենա։
Ոչ։ Միջազգային ֆինանսավորման աղբյուրների հետ նախկինում աշխատելու փորձը պարտադիր չէ։ Դիմորդները պետք է ցույց տան **լեռնային համայնքներին օգուտ բերող նախագծերի կամ ծրագրերի իրականացման և դրանցում ներգրավվածության համապատասխան փորձ**՝ անկախ ֆինանսավորման աղբյուրից։

⇒ Դիմումի գործընթաց

Ինչպե՞ս դիմել դրամաշնորհի համար:
Դիմորդները պետք է լրացնեն և ներկայացնեն **դիմումի ամբողջական ձևը**, որը հասանելի է համապատասխան առցանց հղմամբ՝
https://apps.unep.org/surveyunep/index.php/849129?lang=en

Ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում դիմումի հետ միասին:
Դիմումի հետ միասին դիմորդները պետք է ներկայացնեն՝

- կազմակերպության **վավեր գրանցման վկայականը**,

Ընտրվելու դեպքում դիմորդները լրացուցիչ պետք է ներկայացնեն կազմակերպության **պաշտոնական բանկային տվյալները**, որոնք պետք է համապատասխանեն կազմակերպության գրանցման տվյալներին, կազմակերպության իրավասու ներկայացուցչի ազգային նույնականացման քարտը կամ անձնագիրը:

Ո՞րն է դիմումների ներկայացման վերջնաժամկետը:
Դիմումները կընդունվեն մինչև **2026 թվականի սեպտեմբերի 15-ը, ժամը 23:59-ը,** Հարավային Կովկասի ժամանակով (UTC+4) :
Վերջնաժամկետից հետո ստացված դիմումները չեն դիտարկվի:

Կարո՞ղ են դիմումները ներկայացվել անգլերենից բացի այլ լեզուներով:
Այո: Դիմումի ձևը հասանելի է և կարող է լրացվել Հարավային Կովկասի երկրների լեզուներով և կարող է լրացվել այդ լեզուներով, այդ թվում՝ հայերենով:

⇒ Ֆինանսավորման պայմաններ

Որքա՞ն է տրամադրվող դրամաշնորհի նվազագույն և առավելագույն չափը:
Դրամաշնորհի **առավելագույն չափը 30 000 ԱՄՆ դոլար է**: Նվազագույն դրամաշնորհային չափ սահմանված չէ:
Այնուամենայնիվ, դիմորդներին խրախուսվում է պահանջել **նախագծի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ֆինանսավորում**, որը հնարավորություն կտա իրականացնել էական բնության վրա հիմնված լուծումներ և համապատասխան դաշտային գործունեություն:

Ի՞նչպիսի լուծումներ կարող են առաջարկվել:
Նախագծերը պետք է **հզորացնեն տեղական համայնքներին**, արձագանքեն բացահայտված կլիմայական ռիսկերին և ազդեցություններին և հիմնվեն **էկոհամակարգային մոտեցումների և/կամ բնության վրա հիմնված լուծումների (NbS)** վրա:

Առաջարկվող լուծումները կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Էկոհամակարգերի վերականգնում
- Ջրային ռեսուրսների պահպանում և արդյունավետ կառավարում
- Կլիմայակայուն խելացի գյուղատնտեսություն և պարենային անվտանգության ապահովում
- Աղետների ռիսկի նվազեցում, պատրաստվածություն և դիմակայունության բարձրացում,
- Եկամտի աղբյուրների բարելավում և կենսապահովման միջոցների դիվերսիֆիկացում/ բազմազանեցում/
- Առողջության և կյանքի որակի բարելավում
- այլ նորարարական բնության վրա հիմնված լուծումներ:

Ոգեշնչման և օրինակների համար դիմորդները կարող են ծանոթանալ **Mountains ADAPT** նախաձեռնության համապատասխան հրապարակումներին՝ Solutions from the South Caucasus և Solutions from East Africa:

Ի՞նչ ծախսեր կարող է ծածկել դրամաշնորհը:

Դրամաշնորհային միջոցները կարող են օգտագործվել նախագծի իրականացման հետ անմիջականորեն կապված և հիմնավորված ծախսերի համար, այդ թվում՝

- անձնակազմի և ներգրավված փորձագետների վարձատրություն,
- սարքավորումների և նյութերի ձեռքբերում,
- վերապատրաստման և կարողությունների զարգացման միջոցառումներ,
- գործառնական և վարչական ծախսեր,
- նախագծի իրականացմանն անմիջականորեն առնչվող այլ թույլատրելի ծախսեր:

Բոլոր ծախսերը պետք է լինեն **հիմնավորված, համաչափ և անմիջականորեն կապված հաստատված նախագծի նպատակների ու գործունեության հետ**:

Կա՞ն դրամաշնորհային միջոցների օգտագործման սահմանափակումներ:

Այո: Բոլոր ծախսերը պետք է՝

- ուղղակիորեն կապված լինեն հաստատված նախագծի նպատակների և գործունեության հետ,
- պատշաճ կերպով հիմնավորված լինեն դիմումում և հաստատված բյուջեում,
- համապատասխանեն կիրառելի ֆինանսական կանոններին և ընթացակարգերին,
- ապահովեն միջոցների արդյունավետ, նպատակային և կայուն օգտագործումը:

Բյուջեն **չի կարող ներառել պետական պաշտոնատար անձանց, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ուղղակի աշխատավարձերի կամ հավելավճարների վճարում՝** UNEP-ի ֆինանսական կանոններին և ընթացակարգերին համապատասխան:

Տեղական պաշտոնատար անձանց մասնակցությունը նախագծային գործունեությանը, օրինակ՝ համակարգմանը կամ վերահսկողությանը, կարող է ապահովվել **բնաիրային (դրամական չլինող) ներդրումների կամ պետական համաֆինանսավորման միջոցով**, սակայն SGFS-ի դրամաշնորհային միջոցներից նրանց ուղղակի վճարումներ չեն կարող իրականացվել:

Պարտադի՞ր է համաֆինանսավորումը:
Ոչ: **Համաֆինանսավորումը պարտադիր պահանջ չէ**:
Այնուամենայնիվ, առկա կամ ակնկալվող համաֆինանսավորում ունեցող նախագծերը, օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կամ այլ գործընկերների կողմից տրամադրվող ֆինանսական կամ բնաիրային ներդրումները, **կարող են դիտարկվել որպես առավելություն** ընտրության գործընթացում:

⇒ Ընտրության չափանիշներ

Ինչպե՞ս են գնահատվելու հայտերը:
Հայտերը նախ կանցնեն **համապատասխանության նախնական ստուգում**, որի նպատակն է պարզել, թե արդյոք դրանք համապատասխանում են սահմանված նվազագույն համապատասխանության չափանիշներին:

Նախնական ստուգումն անցած հայտերը կգնահատվեն **տարածաշրջանային ընտրության հանձնաժողովի կողմից**՝ հավելվածներ բաժնում ներկայացված գնահատման մատրիցի և հաստատված որակական գնահատման չափանիշների հիման վրա:

Որո՞նք են ընտրության հիմնական չափանիշները:
Հիմնական չափանիշները ներառում են՝

- առաջարկվող լուծման համապատասխանությունը **տեղական կլիմայական ռիսկերին և խոցելիություններին**,
- **տեխնիկական իրագործելիությունը**,
- **ներառականությունը**, այդ թվում՝ գենդերային հավասարության և երիտասարդների մասնակցության ապահովումը,
- **նորարարական ներուժը և մասշտաբավորման հնարավորությունը**,
- համայնքի **սեփականության զգացումը, ներգրավվածությունը և մասնակցությունը**,
- **բնապահպանական և սոցիալական պաշտպանության պահանջներին համապատասխանությունը**,
- նախագծի **կայունությունը և երկարաժամկետ ազդեցության ներուժը**:

Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս հավելվածներ բաժինը:

Ովքե՞ր են կայացնում դրամաշնորհների հատկացման վերաբերյալ վերջնական որոշումը:
Հարավային Կովկասի տարածաշրջանի ընտրության հանձնաժողովները կգնահատեն նախնական ընտրության փուլ անցած նախագծերը և **կկայացնեն ֆինանսավորման վերաբերյալ վերջնական որոշումները**:
Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս հավելվածներ բաժինը:

Չընտրված դիմորդները կստանա՞ն արձագանք:
Այո: Յուրաքանչյուր դիմորդ կստանա **պաշտոնական ծանուցում** այն մասին, թե արդյոք իր հայտը ընտրվել է ֆինանսավորման համար:
Չընտրված դիմորդներին նույնպես կտրամադրվի **գնահատման արդյունքների վերաբերյալ արձագանք**, հնարավորության դեպքում՝ լրացուցիչ անհատականացված դիտարկումների և կարողությունների զարգացման ռեսուրսների տեսքով:

⇒ Իրականացում և հաշվետվողականություն

Ի՞նչ է տեղի ունենում նախագծերի ընտրությունից հետո:
Ընտրված կազմակերպությունները կհրավիրվեն մշակելու **մանրամասն իրականացման պլան**, որը կներառի հիմնական արդյունքները, գործողությունները, հիմնական փուլերը և ժամանակացույցը:Դրամաշնորհառուների **կազմակերպական և տեխնիկական կարողությունները կգնահատվեն**, և նրանց կտրամադրվի անհատականացված կարողությունների զարգացման աջակցություն՝ ապահովելու համար, որ նախագծերը լինեն տեխնիկապես հիմնավորված, ներառական և համապատասխանեն UNEP-ի **բնապահպանական և սոցիալական պաշտպանության պահանջներին և չափանիշներին**:

Հաշվետվության ի՞նչ պահանջներ են նախատեսված դրամաշնորհառուների համար:
Դրամաշնորհառուները պետք է հաշվետվություններ ներկայացնեն իրենց հաստատված իրականացման պլանում սահմանված ժամանակացույցին համապատասխան:
Հաշվետվությունները պետք է ներառեն, մասնավորապես՝

- նախատեսված հիմնական արդյունքների և համապատասխան փուլերի իրականացման ապացույցներ,
- բյուջեի կատարման և ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն,
- համապատասխան ֆինանսական փաստաթղթեր,
- իրականացված գործունեությունը փաստագրող տեսողական նյութեր, օրինակ՝ լուսանկարներ և տեսանյութեր:

Որքա՞ն հաճախ պետք է ներկայացվեն առաջընթացի հաշվետվությունները:
Նախատեսվում է ներկայացնել **երկու նկարագրական և ֆինանսական հաշվետվություն**՝

1. **միջանկյալ հաշվետվություն**,
2. **վերջնական հաշվետվություն**՝ նախագծի գործունեության ավարտից հետո:

Իրականացման պլանի մշակման ընթացքում կարող են համաձայնեցվել նաև **լրացուցիչ մշտադիտարկման և հաշվետվողականության միջոցառումներ**:

Տեղում այցերն ու աուդիտները մոնիթորինգի գործընթացի մաս՞ են կազմում:
Այո: Ընտրված նախագծերի մի մասը **պատահական ընտրանքի հիման վրա** կարող է ենթարկվել դաշտային մշտադիտարկման այցերի և/կամ համապատասխանության ստուգումների:

Ընտրված նախագծերի նկատմամբ կիրականացվի համապատասխան մշտադիտարկում՝ **հաշվետվողականության, ֆինանսական և ծրագրային պահանջների պահպանման և նախագծերի պատշաճ իրականացման ապահովման նպատակով**:

⇒ Ժամանակացույց

Ե՞րբ կտեղեկացվեն հաջողակ դիմորդները:
Հաջողակ դիմորդների մասին նախատեսվում է տեղեկացնել **2026 թվականի երրորդ եռամսյակում**:

Ե՞րբ պետք է սկսվի նախագծերի իրականացումը:
Նախագծերի իրականացումը նախատեսվում է սկսել **2026 թվականի չորրորդ եռամսյակում**:

Որքա՞ն է դրամաշնորհի իրականացման ժամկետը:
Դրամաշնորհային նախագծերի իրականացման նախատեսվող ժամկետը **12 ամիս է**:

⇒ Աջակցություն

Դիմումի ներկայացման ընթացքում տեխնիկական աջակցություն հասանելի՞ է:
Այո: Դիմումի ներկայացման ընթացքում տեխնիկական աջակցության կամ որևէ հարցի պարզաբանման համար դիմորդները կարող են կապվել **UNEP-ի ծրագրային թիմի** հետ՝ նշված պաշտոնական էլեկտրոնային հասցեով /**unep-mountainsadapt@un.org**/

Դրամաշնորհառուներին կտրամադրվի՞ վերապատրաստում կամ կարողությունների զարգացման աջակցություն:
Այո: Դրամաշնորհառուներին կտրամադրվի **անհատականացված կարողությունների զարգացման աջակցություն**՝ նրանց կարողությունների և կարիքների նախնական գնահատման հիման վրա: Աջակցությունը կարող է ուղղված լինել, մասնավորապես, նախագծերի տեխնիկական իրականացման, ֆինանսական կառավարման, հաշվետվողականության, մշտադիտարկման, ներառականության և բնապահպանական ու սոցիալական պաշտպանության պահանջների պահպանման կարողությունների ամրապնդմանը:

Հավելված 1. Ստանդարտացված դիմումի գնահատման ամփոփագիր

Բաժին 1. Հիմնական տեղեկատվություն

Դաշտ	Մանրամասներ
Դիմումի ID	[Ավտոմատ գեներացվում է]
Երկիր / տարածաշրջան	[օրինակ՝ Հայաստան /Հարավային Կովկաս]
Դիմորդ կազմակերպություն	Կազմակերպության անվանումը]
Իրավական կարգավիճակ	[Գրանցված համայնքային հիմքով գործող կազմակերպություն / քաղաքացիական հասարակության կազմակերպություն (ՔՀԿ) / կանանց կազմակերպություն / երիտասարդական կազմակերպություն / այլ]
Նախագծի անվանումը	[Ամբողջական անվանումը]
Հայցվող դրամաշնորհի չափը	[ԱՄՆ դոլար]
Իրականացման տևողությունը	[օրինակ՝ 12 ամիս]
Իրականացման վայրը	[Համայնք / շրջան, GPS կոորդինատներ՝ առկայության դեպքում]

Բաժին 2: Թեմատիկ ուղղվածություն և ամփոփ նկարագիր

Թեմատիկ ուղղություններ	[✓ Էկոհամակարգերի վերականգնում/ ✓ Կլիմայակայուն խելացի գյուղատնտեսություն]
Նախագծի համառոտ նկարագիրը	[3–5 նախադասությամբ ներկայացնել հիմնական գործողությունները, նպատակները և ակնկալվող արդյունքներն ու ազդեցությունները]

Բաժին 3. Համապատասխանության նախնական ստուգում

Համապատասխանության չափանիշներ	Այո / Ոչ
Դիմորդը պատշաճ կերպով գրանցված **համայնքային հիմքով գործող կազմակերպություն կամ քաղաքացիական հասարակության կազմակերպություն (ՔՀԿ)** է:	
Առաջարկվող նախագիծը հստակորեն առնչվում է **կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությանը**:	
Առաջարկվող լուծումը հիմնականում հիմնված է **բնության վրա հիմնված լուծումների (NbS) և/կամ էկոհամակարգային հարմարվողականության մոտեցումների** վրա:	
Դիմորդն ունի փոքր դրամաշնորհը կառավարելու համար անհրաժեշտ **ֆինանսական և գործառնական կարողություններ**:	
Առաջարկը համապատասխանում է **բնապահպանական և սոցիալական պաշտպանության պահանջներին** (նախնական ստուգում):	

Նշում. *Նախնական համապատասխանության ստուգումը հաջողությամբ անցնելու համար* ***բոլոր չափանիշների դիմաց պետք է նշված լինի «Այո»****:*

Բաժին 4. Գնահատման ամփոփագիր և միավորների բաշխման աղյուսակ

Չափանիշ	Առավելագույն միավոր	Տրված միավոր	Դիտարկումներ
Տեղական կլիմայական խոցելիություններին և ազգային/տեղական առաջնահերթություններին համապատասխանություն	**20** միավոր		
Տեխնիկական իրագործելիություն և կայունություն	**20** միավոր		
Ներառականություն և գենդերային/երիտասարդական հավասարություն	**15** միավոր		
Նորարարություն / մասշտաբավորման ներուժ	**15** միավոր		
Համայնքային պատասխանատվություն և մասնակցություն	**15** միավոր		
Համապատասխանության և կայունության ապահովում, ռիսկերի կառավարում, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական պաշտպանության պահանջների ինտեգրում	**15** միավոր		
Ընդհանուր միավոր	**100 միավոր**	**[xx/100]**	

Գնահատման նվազագույն շեմ. 60 միավորից ցածր ընդհանուր գնահատական ստացած հայտերը, որպես կանոն, **չեն առաջարկվում ֆինանսավորման համար**: Բացառիկ դեպքերում նման հայտը կարող է ներկայացվել հանձնաժողովի լրացուցիչ քննարկմանը՝ համապատասխան հիմնավորմամբ:

Բաժին 5. Ընտրության հանձնաժողովի դիտարկումներ

Բաժին	Դիտարկումներ
Հիմնական ուժեղ կողմեր	[օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության հստակ մեխանիզմներ, լավ մշակված մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգ]
Հիմնական ռիսկեր/թույլ կողմեր	[օրինակ՝ նախագծերի իրականացման նախորդ փորձի սահմանափակություն, ֆինանսական կառավարման կարողությունների վերաբերյալ մտահոգություններ]
Համապատասխանություն ազգային առաջնահերթություններին	**[օրինակ՝ առաջարկը համապատասխանում է ազգային հարմարվողականության ծրագրով սահմանված առաջնահերթ ուղղությանը]**
Անհրաժեշտ է լրացուցիչ պարզաբանում	[Այո / Ոչ — եթե այո, նշեք պահանջվող պարզաբանումը]

Հավելված 2. Հանձնաժողովի ընտրության գնահատման մատրիցա

	Գնահատման չափանիշ	Առավել ագույն միավոր	Միավորների հաշվարկման ուղեցույց	Ուղղորդող հարցեր / լրացուցիչ մեկնաբանություններ
1.	**Համապատասխանություն տեղական կլիմայական խոցելիություններին և ազգային/տեղական առաջնահերթություններին**	20 միավոր	0–5՝ կլիմայական խոցելիություններին կամ քաղաքական առաջնահերթություններին հստակ չի համապատասխանում: 6–10՝ առկա է ընդհանուր համապատասխանություն, սակայն կապը թույլ է հիմնավորված: 11–15՝ առկա է հստակ համապատասխանություն և հիմնավորված կապ: 16–20՝ առկա է ուժեղ, ապացույցների վրա հիմնված համապատասխանություն բացահայտված կլիմայական ռիսկերի և համապատասխան ազգային/տեղական առաջնահերթությունների հետ:	Արդյո՞ք նախագիծն ուղղակիորեն անդրադառնում է նույնականացված կլիմայական խոցելիություններին: Արդյո՞ք այն նպաստում է ազգային և/կամ տեղական մակարդակում կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության նպատակների իրականացմանը:
2.	**Տեխնիկական իրագործելիություն և կայունություն**	20 միավոր	0–5՝ առաջարկը անորոշ է, տեխնիկապես ոչ հիմնավորված կամ գործնականում կիրառելի չէ: 6–10՝ ընդհանուր առմամբ իրագործելի է, սակայն առկա են էական տեխնիկական կամ գործառնական բացեր: 11–15՝ իրագործելի է և կարող է իրականացվել կառավարելի ռիսկերի պայմաններում: 16–20՝ լավ մշակված, տեխնիկապես հիմնավորված և իրատեսորեն իրականացվող առաջարկ է:	Արդյո՞ք առաջարկվող գործողությունները տեխնիկապես հիմնավորված և իրագործելի են նախատեսված ժամկետների և բյուջեի շրջանակում: Արդյո՞ք հիմնական ռիսկերը պատշաճ կերպով բացահայտված և կառավարվող են: Արդյո՞ք նախատեսված են նախագծի արդյունքների և ազդեցության պահպանման մեխանիզմներ դրամաշնորհի ավարտից հետո:
3.	**Ներառականություն և գենդերային/երիտասարդական հավասարություն**	15 միավոր	0–5՝ ներառականության հստակ մոտեցում կամ ռազմավարություն չկա: 6–10՝ որոշակի ուշադրություն է դարձվում ներառականությանը, սակայն մոտեցումը սահմանափակ է: 11–15՝ առկա է ուժեղ և նախագծի բոլոր փուլերում ինտեգրված ներառականության մոտեցում:	Արդյո՞ք նախագիծը հնարավորություն է տալիս մարգինալացված կամ խոցելի խմբերին, այդ թվում՝ կանանց, երիտասարդներին և, համապատասխան համատեքստում, բնիկ ժողովուրդներին, ունենալ իմաստալից մասնակցություն և որոշումների կայացման մեջ դեր: Արդյո՞ք գենդերային հավասարությունը և սոցիալական ներառականությունը ներառված են նախագծի պլանավորման և իրականացման մեջ:
4.	**Նորարարություն և մասշտաբավորման ներուժ**	15 միավոր	0–5՝ նորարարական տարրեր չկան, կամ առաջարկը հիմնականում կրկնօրինակում է առկա մոտեցումները՝ առանց հստակ ավելացված արժեքի: 6–10՝ առաջարկն ունի որոշ նորարարական կամ այլ համատեքստում կիրառելի տարրեր: 11–15՝ առաջարկը ներառում է հստակ նորարարական մոտեցումներ և ունի այլ համայնքներում կամ համատեքստերում կրկնօրինակման և/կամ մասշտաբավորման բարձր ներուժ:	Արդյո՞ք լուծումը ներառում է նոր գաղափարներ, մոտեցումներ կամ մոդելներ: Արդյո՞ք այն կարող է կրկնօրինակվել կամ մասշտաբավորվել այլ լեռնային համայնքներում կամ համանման համատեքստերում:

5.	**Համայնքի ներգրավվածություն և մասնակցություն**	15 միավոր	0–5՝ նախագիծը հիմնականում մշակված է վերևից ներքև մոտեցմամբ, համայնքի մասնակցությունը սահմանափակ է կամ բացակայում է։ 6–10՝ իրականացվել են համայնքի հետ որոշակի խորհրդակցություններ և ներգրավման գործողություններ։ 11–15՝ առկա է ուժեղ մասնակցային պլանավորում, համայնքի իրական սեփականություն և տեղական դերակատարների ակտիվ ներգրավվածություն։	Արդյո՞ք համայնքի անդամները ներգրավված են եղել նախագծի մշակման փուլում։ Արդյո՞ք համայնքը մասնակցելու է որոշումների կայացմանը։ Արդյո՞ք համայնքային կազմակերպությունները կամ տեղական դերակատարները կղեկավարեն կամ համատեղ կիրականացնեն նախատեսվող գործողությունները։
6.	**Ռիսկերի կառավարում և բնապահպանական ու սոցիալական պաշտպանության պահանջների ինտեգրում**	15 միավոր	0–5՝ ռիսկերը և բնապահպանական ու սոցիալական պաշտպանության պահանջները չեն բացահայտվել կամ պատշաճ կերպով հաշվի չեն առնվել։ 6–10՝ հիմնական ռիսկերը ճանաչվել են, սակայն դրանց մեղմացման միջոցառումները սահմանափակ են կամ ոչ լիարժեք։ 11–15՝ բնապահպանական և սոցիալական ռիսկերը հստակ բացահայտված են, և դրանց կանխարգելման կամ մեղմացման համար նախատեսված են համապատասխան և իրատեսական միջոցառումներ։	Արդյո՞ք նախագիծը բացահայտել է հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերը, օրինակ՝ էկոհամակարգերին հասցվող վնասը, խոցելի խմբերի բացառումը, շահերի բախումները կամ տեղական լարվածությունները։ Արդյո՞ք նախատեսված են այդ ռիսկերի կանխարգելման և մեղմացման իրատեսական միջոցառումներ։ Արդյո՞ք նախագիծը կիրառում է «վնաս չպատճառելու» սկզբունքը և միաժամանակ խթանում է բնապահպանական և սոցիալական համատեղ օգուտները։

Ընդհանուր միավոր . ____ / 100

Ընտրության՝ որակական մեկնաբանություններ

- **Հիմնական ուժեղ կողմերը։**
- **Թույլ կողմերը կամ հիմնական մտահոգությունները։**
- **Առաջարկվող պայմանները կամ լրացուցիչ պահանջները, եթե կիրառելի է։**
- **Լրացուցիչ պարզաբանումներ կամ փաստաթղթեր, եթե պահանջվում են։**

Գնահատման սանդղակ

Միավորների միջակայք	Գնահատական	Առաջարկվող որոշում
90–100	Գերազանց	Լիարժեք առաջարկվում է ֆինանսավորման համար՝ առանց էական լրացուցիչ պայմանների։
75–89	Ուժեղ	Առաջարկվում է ֆինանսավորման համար՝ հնարավոր փոքր պարզաբանումների կամ լրացումների պայմանով։
60–74	Միջին	Կարող է դիտարկվել ֆինանսավորման համար, եթե առաջարկը համապատասխանում է կոնկրետ տարածաշրջանային կամ թեմատիկ առաջնահերթություններին և առկա է բավարար ֆինանսավորում։
0–59	Թույլ	Չի առաջարկվում ֆինանսավորման համար ընթացիկ ընտրության փուլում։